«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.Լ.ՊՈՒՏՅԱՆ

2021թ. «_____»

Հայաստանի պատանիների և աղջիկների 2021թ. առաջնության

եզրափակիչ մրցաշարերի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Առաջնության կազմակերպիչը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2021թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի կազմակերպիչն է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Անցկացման նպատակը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2021թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի անցկացման նպատակն է 8-18 տարեկան տարիքային խմբերի 2021թ. չեմպիոններին և մրցանակակիրներին որոշելը: Մրցաշարը հանդիսանում է ընտրական փուլ՝ Եվրոպայի և աշխարհի պատանիների և աղջիկների առաջնությունների համար:

Անցկացման վայրը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2021թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝Շևչենկո 34, ք. Երևան, Հայաստան, հեռ. +37410448473):

Անցկացման ձևաչափը.

Առաջնությունն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

- մինչև 8 տարեկան (2013թ. և փոքր) տղաներ
- մինչև 10 տարեկան (2011-2012թթ.) տղաներ և աղջիկներ
- մինչև 12 տարեկան (2009-2010թթ.) տղաներ և աղջիկներ
- մինչև 14 տարեկան (2007-2008թթ.) պատանիներ և աղջիկներ
- մինչև 16 տարեկան (2005-2006թթ.) պատանիներ և աղջիկներ
- մինչև 18 տարեկան (2003-2004թթ.) պատանիներ և աղջիկներ

Առաջնությունն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն՝ շրջանային մրցակարգով: Մինչև 18 տարեկան աղջիկների մրցաշարի տուրերի քանակը կորոշվի ըստ մասնակիցների քանակի, 10 և 12 տարիքային խմբերի մրցաշարերն անցկացվում են 12 մասնակիցներով, մնացած տարիքային խմբերի մրցաշարերը՝ 10 մասնակիցներով:

Ժամակարգը.

Տրվում է յուրաքանչյուր մասնակցին 90-ական րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 15 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հաղթողների որոշման կարգը.

Մրցաշարում տեղերը բաշխվում են համաձայն հավաքած առավելագույն միավորների: Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր տարիքային խմբերում տեղերը կորոշվեն հետևյալ լրացուցիչ ցուցանիշներով.

1. ըստ Զոնեբորն-Բերգերի համակարգի
2. ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
3. ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի
4. ըստ հաղթանակների առավելագույն քանակի:

Առաջնության անցկացման ժամկետները.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն ս.թ. ապրիլի 13-ից 23-ը:

Մրցաշարի բացումը՝	ապրիլի 13-ին	ժամը 14:00–ին:
Խաղերի սկիզբը՝	ապրիլի 13-ից ամեն օր	ժամը 15:00-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 13-ին մեկնարկելու է մինչև 10տ. և 12տ.տղաների և աղջիկների եզրափակիչ մրցաշարերը: Մյուս տարիքային խմբերի 1-ին տուրը կմեկնարկի ապրիլի 14-ին:

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:

Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և այլ էլեկտրոնային սարքերով: Խաղի ընթացքում մասնակցի մոտ հեռախոս հայտնաբերվելու դեպքում, համաձայն ՖԻԴԵ-ի կանոնների, կգրանցվի պարտություն, և միջադեպը կդրվի քննարկման Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահության նիստին՝ հետագա պատժամիջոցներ սահմանելու համար: